


ապացոյց, որ դեռ մի քանի հարիւր տարի առաջ մեր հայ ընտանիքների մէջ ասեղնագործութեան արուեստը բաւական յայտնի զարգացման էր հասել:

Սոցա վրայ չեմ կարող չաւելացնել նաև մի գեղեցիկ հնութեան յիշատակութիւնը, որը ինձ ուղարկեց մի գերմանացի պ. Ֆոն Գոտվալդը կաղզուանից:

Այդ պարոնը Ս. Թճուկից փոքր յետոյ այստեղ գալով վանքը տեսնելու նպատակաւ և լսելով որ այստեղ հետաքրքրուած են և ժողովում հնութիւններ, խօստացաւ ինձ մի զրահ ուղարկել, որ բեղման ժամանակ գրտնուել է Ղարա-Ղալա (Երուանդակերա) գիւղում: Այդ զրահը (КОЛЪЧУГЪ) բարակ երկաթեայ օղերից շինած մի շապիկ է, որ մինչև օրս էլ քրդերի և ըստ ոմանց նաև պարսիկների ու չերքեզների մօտ գործ է դրուած թրի և դաշոյնի հարուածների դէմ պաշտպանուելու համար: Պարոնը այդ թանգագին ընձան ինձ ուղարկելով առաջնորդուեց այն գաղափարով, թէ աւելի լաւ և աւելի նշանակութիւն կունենայ երկրի մէջ գտած հրնութիւնը երկրի մէջ պահել, քան ուղարկել Եւրոպայի մի որևէ բազմահարուստ թանգարան, որի մի անկիւնում անհետ և աննկատելի պիտի կորչի:

ՄԵՍՐՈՊ Վ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ.



Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ *

Մ

Մ • Խորենացու լաւ չհասկացուած բառերից մէկն է „այրէջող“ մի անգամ միայն գործածուած բառը. „Թողո՞վրդականք վէպը, ստահակք, մեծախօսք, ան-

վաստակք, այրէջող“ վնասակարք, փախողք ի ժառանգութենէ“: (Խոր. Գ. ողբ): Վերջին թարգմանիչներից Հ. Խորէն Ստեփանէն այդ բառը թարգմանում է „էրբ ինչէջող“: Լմինը իւր նորագոյն ռուս թարգմանութեան մէջ՝ НАСМѢШЛИВЫЙ=ճաղրող, ճաղր և ծանակ սիրող: Մինչդեռ „այրէջող“ նշանակում է կրակ ձրգող, գիտութեամբ հրդեհող: Հրձգութիւնը այն է՝ թշնամաբար մէկի տունը, դէպը մարազը և այլն հրդեհելը ամենատարածուած քրէական յանցանքներից մէկն է այժմս էլ հայ գիւղացիների մէջ: Երևի այդպէս է եղել և հնումը: „Այրեցող“ բառի այդ իրաւարանական նշանակութեանը վկայում է Մխիթար Գօշքը. „ԽԼ. Յաղագս դատաստանաց այրէջող“:— Եթէ իմանա՞ք հար թէ՞ քան... Ապա եթէ մտաբար իտար իտար օրունի կամ յայսպիսեաց իցէ, կրկին լիցի տուգանքն: Սոյն լիցի ցանկոյ և նմանեաց նորին. այսպէս հանդերձից և նոցին նմանեաց“: (Պատասնագիրք, հր. Վ. Բաստ. Վրըշպտ. 1880 եր. 359: Տես նաև եր. 353: Յաղագս դատաստանաց հրդեհից. այլ և՛ Սերսէս Բ կաթողիկոսի կանոնները կանոն ԺԷ. — վասն որ դարձնայրէ ընչ! — և... կանոն ԽԹ. — վասն որ հարցի թէ՞ այրէ և այլն: Պատաստանագիրք, յառաջաբան. եր. 74):

Մի ուրիշ աւելի կարևոր վկայութիւն, որը անշուշտ աչքի առաջ է ունեցել Խորենացու Ողբի հեղինակը. — „Վնասակարացն և այրէջողացն, որ զտունս այրեն և կամ զայլ ինչ նիւթ՝ Ի ամ ապաշխարեցնն“: (Եպիփանուկիարոսի սբ. հայրապետի կանոնք. Չեռ. Մատեն. Իջ. № 1737): Հմմտ. Խորենացու սացուածը. „այրէջող“ վնասակար“:

կութիւն իմ Խորենացու Պատմութեան Ուսումնասիրութեանց, որը ընդհատուեց ծանր հիւանդութեան և երկարատև բացակայութեան պատճառով. Վերնագիրը փոխուած է, որովհետև այս հետազօտութիւնները վերարբոււմ են ոչ միայն Խորենացուն, այլ մեր հին մատենագրութեանը ընդհանրապէս:

* Այս գրուածքը պէտք է նկատել իբրև շարունակ

Աներև է որ Խորենացու «Կէն-ընէրէ թուին պէտք է աւելացնել և այս կանոնները: (Տես և Զարբանաւ Հայկականք թարգմանութիւնք, եր. 499. կանոն Կէն-ընէրէ կողմէն):



Խորենացու վերեւն առաջ բերուած հատուածի մէջ իմ կարծիքով մինչև օրս ուղիղ չէ հասկացուել և հետևեալ ասացուածը: «Կէն-ընէրէ է ժողովուրդն: Իմինի նորագոյն թարգմանութիւնը (աւելորդ ենք համարում բոլոր թարգմանութիւններն յիշելը խոյս տալով երկարութիւնից: Իմինի այս նոր թարգմանութիւնն է համարուում ամենից կատարեալը: տես նոյն գրքում պ. Գրիգոր Խալաթեանցի յառաջարանը) այդ կտորը հասկանում է ինչպէս և իւր առաջին թարգմանութեան մէջ՝ „чуждающійся духовнаго званія“: Այսպէս են հասկանում և ամենքը շփոթելով ժողովուրդն և ժողովուրդներն: Ոչ մի միտք չունի հին հայ առակի մասին ասել թէ նա փախչում էր ժառանգաւորութիւնից, այսինքն է՝ եկեղեցական կոչումից, քանի որ այս կոչումը տալիս էր մեծամեծ արտօնութիւններ, դիւրակեցութիւն և «չար-ընէրէ»: (Տես Աղաթ. մթմ. ազարակներում չորս չորս հոդ, իսկ աւաններում եօթն եօթն երգի (տուն, ծուխ) հոդ ժառանգաւորների համար յատկացրած: Տես Մխիթ. Գօշ. Մասն Ա. յղգս դատաստանաց եկեղեցւոյ ժառանգաւորաց, յաղագս դատանց քհնյից, յաղագս դատ. վանաց. Բաստամեանի 416, 418, 419, 420 ծանօթ. և ըն. և ըն.): Այսօր էլ չնայած մեր գիւղական քահանաների աննախանձելի վիճակին՝ գիւղացին չէ փախչում ժառանգաւորութիւնից, այլ բնդ հակառակը, շատ անգամ նոյն իսկ ահագին պարտքերի մէջ է խրուում այդ վիճակին արժանանալու համար: Վանական ժառանգաւորութիւնն էլ հին ժամանակում կապուած էր նիւթական նուիրաբերութիւնների

հետ. այդ բանին վկայում են մեզ հասած թարգմանութիւնները վանքերի պատերի վրայ. „Յտու զայգիս և հիւ-բանեցոյ, ետու զջրաղացս,“ և ըն. և ըն.: Խեղճ և ընկճուած հայ գիւղացին, որ կրում էր բոլոր տարբերի, հարկերի ծանրութիւնը (տես Մխիթ. Գօշ. և անթիւ արձանագրութիւնք հարկերի մասին „Այրարատ“, „Սիսական“, „Շիրակ“ և ըն.) ոչ թէ ժողովուրդն էր (եկեղեցական կոչումից) էր խուսափում որ իւր համար մի փրկութիւն էր, այլ ինչպէս ժողովուրդն էր շոգ ու ջրից:

Ժողովուրդն էր գիւղացիներ յայտնի են հողատիրութեան պատմութեան մէջ՝ բոլոր երկրներում մանաւանդ միջին դարերում: Երբ իշխանի, ազատի, նախարարի հող ու ջրից օգտուելը ծանր հարկերի և պարտաւորութեանց պատճառով այլ ևս անհնար էր դառնում այն ժամանակ առմիկներն սկսում էին փախչել իրենց ժառանգութիւնից, դիմելով աւելի մարդասէր և մեղմ բարքերի տէր իշխանների, վանքերի, կամ իբրև անկախ և գրեթէ ազատ մարդ վարձուում էին ուրիշների մօտ: Մեր դրացի Վրաստանում յայտնի է մի այդպիսի դասակարգ՝ առաջ եկած փախստական գիւղացիներից՝ ինչպէս անունով: Առաջընդհանրի մէջ հանդիպել եմ ինչպէս կամ ինչպէս կոչմանը և մեր մէջ, առանց որոշ ցուցումների: Թեպէտ և ճարտարագիտ. (servage, քրե-постное право) վերջնականապէս չհաստատուեց Հայաստանում բայց վրաց տիրապետութեան ժամանակ մասնաւոր փորձեր եղան: (Տես Ճորտի յիշատակութիւն արձանագրութեանց մէջ. „Այրարատ“ եր. 171 ծնթ. 1. „Աւետիս, մականուն Կոնկիկ“ շինական (=ճորտ) ընծայուած Գովհաննավանքին: Այդպիսի „շինականի“ յիշատակութիւն տես և եր. 263 Վասակի արձանագրութեան մէջ: Մի երրորդը՝ „Խաչատուր ճորտ“ եր. 172: Բայց այս բոլորը պէտք է համարել մասնաւոր երեւոյթ, և վերագրել Վրաստանում տիրող կարգերի ազ-

դեցութեանը): Այս մասին թանկագին տեղեկութիւններ ունի և Մխիթ. Գոշը: Սրա կանոնները թէև շատ տեղ ընդօրինակութիւն են սուրբ գրքի, սակայն անկասկած է որ իւր ժամանակում իրան նշանակութիւն ունեին: Կամ աւելի ճիշտն ասած՝ իրականը կեանքի մէջ իսկապէս գոյութիւն ունեցողը՝ անհամեմատ աւելի խիստ, ուսակի համար ծանր և դժուարատար էր: քան Գոշի տուած վճիռներըն ու ցուցումները: Գոշը իւր ժամանակի ամենամեծ յոսանք և յառաջադիմական մարդըն է եղել և իւր վճիռները բոլորը յօգուտ ուսակին, ժողովրդեան են, (անշուշտ իւր ժամանակի տիրող հայեացքների հետ համեմատած):

Խորենացու այս առաջ բերուած ասացուածի ճիշտ հասկացողութեան համար մասնաւորապէս կարևոր է Գոշի հետևեալ յօդուածը որից երևում են թէ Գոշի անձնական հայեացակետը և թէ նոյն ժամանակ տիրող հայեացքները այս առաջնակարգ խնդրի վերաբերութեամբ: — Ազատ Արարաչէն եղև մարդկայինս բնութիւնս այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստանս զի Խորենացու գրքի (տեղումնի հողն ու ջուրը) ապա է (շինականը) ուր և համարող հայ: (Այս Գոշի կարծիքն է): Ապա (եթէ) այժմ ունեիք ու է պերանցն և բանաստեղծ գրքացեալուն անբնական: զինի մահուան հօրն ազատ են որդիքն քննեալ այլու և ոչ անդ: (Յազրու դատաստանաց շինականաց՝ եր. 320) տես և եր. 317 „...յորժամ աւերս շինեսցեն և հողս հատանիցեն ի մայրեաց՝ և ինս,“ տես և եր. 335—37, յաղագս դատ. Զառանգ (ստրուկ) և ին. Գոշի այս յօդուածից պարզ երևում է գործերի գրութիւնը: Հողատէր ազատները ռոնադատում էին իրենց շինականներին կապուած մնալ հողի հետ: Գոշը ազատ է համարում այդ բունի կերպով հողի հետ կապուած լինելուց փախստական կամ տէր չունեցող ուսակների միայն այն

„...դիւրին, որոնք այլու այն է՝ ազատութեան մէջ են ծնուած և ոչ թէ արեւելի հողի վրայ, և այլն:“

Առանց մանելու այս հողատիրական—պատմական մեծ խնդրի մանրամասն ուսումնասիրութեան մէջ՝ եզրակացնենք մեր կարծիքը: „Փոխադրութիւնն է զառանգութիւնն“ պարզապէս նշանակում է „ժառանգութիւնից, իւր հող ու ջրից, իւր տուն ու տեղից փախող“: Եւ այդ շատ հասկանալի է, երբ այլ առաջ ունենանք հնումը տիրող հողատիրական պայմանները: Իսկ թէ Ողբի հեղինակը պախարակում է „ժառանգութիւնից փախողներին“, այդ ասացուածը պէտք է զարմացնէ մեզ կրօնաւորի բերանում: որը Պօղոսի հետ միասին կրկնում է. „ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց“ և ինս:

Խորենացու հետևեալ հատուածը անխորհրդակա մի գժուար լուծանելի անեղծուած է եղել թարգմանիչների և վերծանողների համար: Իսկ իցրատմալ հիւսիսոյ ի դուռնահատ վելելոյ, խաղայ (Վաղարշակ) իջանէ (ի Տայոց) է Գոշան Թժ. և անդ զախար ձերն Թժի բանակի ի տեղուջ, ուր գեղն Թժ ի ծովակէն շիւսիսոյ սկիզբն առեալ իջանէ և խառնի ի ձորն Թժ. (Բ. Գ.):

Եմինը իւր նոր թարգմանութեան մէջ (ինչպէս և միւս բոլոր թարգմանիչները) առանց որևէ ծանօթութեամբ գտնէ խնդրի լուծման գժուարութեանը մասնացոյց լինելու՝ մտք մեծօր հոսիստում է Եմինսօրը (Արարատեան դաշտի), իսկ մեծ գաշտոյ, մեծ գետոյ ասոցուածները թողնում է անորոշ: գրելով փոքրատառ: Եմինին հետևող չ. Ստեփանէն այս հատուածը թարգմանում է. Իսկ երբ հիւսիսը ցրտացու սաստիկ քամիների վելելուց, Վաղարշակ գալիս է իջնում է մեծ գաշտոյ և այնտեղ Եմինսօրի ամին բնակում է այնտեղուս ուր մեծ գետը շիւսիստ-

յին ծագակից սկիզբն առնելով իջնում և խառնվում է մեծ տղամուտի (Ք) հետ:

Խնդրի գծաւարութիւնն այն է, որ յայտնի Հիւսիսային Ծովակից սկիզբն առնող Ռեթ Գեօք կարող է լինել Ախուրեանը, որը խառնուում է Արաքսի հետ շատ հեռու Արարատեան Մեծամորից: Եթէ Ռեթ Գեօք հասկանանք Արաքսը, ինչպէս և հասկացուել է մինչև այժմ: Ռեթ Գեօք արարատեան գաշտը Ռեթ Դօրը—Մեծամորը, այն ժամանակ ինչ գործ ունի այստեղում Հիւսիսային Ծովակը, որի ջրերը ճիշտ է որ թափուում են Արաքսի մէջ Ախուրեանի գետախառնուրդում: Բայց Մեծամորից շատ և շատ բարձրում:

Խորենացին մի քիչ առաջ (Բ. Գ.) անուանում է արարատեան Մեծամորը «Մօր մեծ», — Հասանէ ի Միջոց* աշխարհիս վերագոյն քան զհիւսիս Մօրին մեծի յափն Երասխայ, մօտ Արմաւիրն, որ ասի բլուր: Մի ուրիշ տեղ էլ ուղղակի Մեծամօր է կոչում: «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն, շինէ քաղաք յիւր անուն, անուանեալ Արտաշատ» (Բ. խթ):

Բայց այս վկայութիւններով կինճիւր չէ լուծուում և անհասկանալի է մնում Մեծամօրի հետ Հիւսիսային Ծովակի յիշատակութիւնը:

1881 թուի Վենետիկի Խորենացու փոքրագիր հրատարակութիւնը իբրև յատուկ անուններ է հասկանում «Մօր Մեծ, գաշտ Մեծ, գետ Մեծ», գրելով զլիստատուով, և այս բանի բացատրութիւնը գտնում ենք հրմուտն Ալիշանի «Այրարատում» (եր. 4, 5, 106—107), ուր ասուած է ի միջի այլոց. «Արգ Ծովակն Հիւսիսոյ յայտ է կոչեցեալն և Պարակաջն և այժմ Զբլաքը — կեօլէ», յորմէ ելանէ արգարև համանուն գետակ և իջանէ ի գետն Վարսայ, և ըստ այսմ լինի Մօր Մեծ:

* Միջոց—աշխարհ — Այրարատեան աշխարհ, Հմոր. «Եւ գունան որ էր ի կողմանս Ատրպատականի ոչ ժամանեաց ձեռն տալ Միջոց—աշխարհին», Եղիշէ Գ. յեղ. եր. 73. Մոսկ. 1892:

և ջուրն Զբլաքայ Մեծ Գեօք, իսկ Մեծ գաշտ պատշաճի անհասկառակ Զարիշատայ վիճակին, զի ջուրն այն Զբլաքայ կորէ զնա ընդ բովանդակ լայնութիւնն ի հիւսիսոյ ընդ հարաւ: Սակայն թուի ինձ Մեծ կամ Մեծ-Գեօք անուն՝ պատշաճագոյն վերին կիսոյ մասին այժմեանս Արփայ չայի, այսինքն զխառնուրդը կարուց գետոյն ընդ նա. քանզի ճիւղայն օրինակ մի (Ք) աշխարհագրութեան նորին Խորենացուց, յիշելով զգաւառան «Վանանդ և Շիրակ» (յարէ ի նոյն), յոչ Եկեալ «գետն Ախուրեան, հանգերձ Մեծ-Գեօքն», «անցանելով յեղից կուտէ Մարիկոպօլսի, այսինքն Շիրակաշատի և Մրենոյ և Երուանդաշատ քաղաքի իջանէ յԵրասխ»: Արգ քանզի աստանօր որոշակի ցուցանի Ախուրեանի գալ ի Վանանդայ և ի Շիրակայ՝ հանքէն Մեծ-Գեօքն՝ պատշաճագոյն թուի այս անուն՝ Արփայի, քան Զբլաքայն և ըն. . . . (Այրարատ եր. 4, 5, այլև 106—107): Այսպիսով Հ. Ալիշանը Խորենացու վերելում առաջ բերուած հատուածին տալիս է բոլորովին նոր բացատրութիւն, որով այս Մեծ Մօրը, Մեծ Գետը կամ Մեծագետը և Մեծ Գաշտը արարատեան գաշտից զուրս են մնում և ընկնում են Հիւսիսային Ծովակի մօտերը:

Եւ յիրաի ուշի ուշով քննելով Հ. Ալիշանի պատճառարանութիւնը (մանրամասնութիւնները տես «Այրարատում») և միև կողմից Խորենացու հատուածը համեմատելով Հ. Առքրեանի հրատարակած Խորենացու Աշխարհագրութեան 34 երեսի հետ, տեսնում ենք որ իսկապէս կայ մի Մեծ-Գեօք Հիւսիսային ծովակից բղխող սրով պարզուումէ բուարար չափով այս հատուածի կինճիւրը: (Géographie de Moïse de Corène, texte arménien, traduit en fran. par le P. Arsène Soukry, Venise 1881):



Խորենացին վերձանողների մօտ յամառութեամբ յարատեոզ սխալներից մէկն է հայ-

բարեկամութիւնը մեզինքս հետեւեալ
 հատուածում: «Քանզի ստացու (Ս. Սահակ)
 աշակերտս վաթսուէն ըստ նմանութեան ճայր-
 քաղաքացի Սպուզէից, արք կրօնաւորք, խա-
 րազնագգեստք և ըն. (Գ. Խթ.): Էմինի նոր
 թարգմանութիւնը կրկնում է հին սխալը գրե-
 լով. «մարաքաղաքների Սպուզէների նմանու-
 թեամբ» — «Которые во всемъ слѣдовали
 примѣру столичныхъ? Спудеевъ, (Էմին և
 Սանփանէ): Անկարօտ է սպացուցութեան սր
 այտեղ ճայրքաղաք նշանակում է Քէ Քան, սր
 բնութիւն և պէտք է թարգմանել Սպուզէների
 Քանքէն նման: Հետաքրքրականն այն է, որ
 այս հատուածը վաղուց արդէն ճիշտ վեր-
 ծանուած և թարգմանուած է (Ինճիճեան
 Հնարագ. Գ. 204. Իտալ. թարգ. „Sotto la for-
 ma de' grandi conventi de' Spudei“. Նոր Հայ
 կազեան Բառարան և ըն.):

Այնքան յաճախ է մեր հին մասնագրու-
 թեան մէջ ճայրքաղաքն այս առումը գործա-
 ծուցիւնը, որ աւելորդաբանութիւն է նոր
 օրինակներ բերելը: Սակայն պէտք է գիտել,
 որ Սպուզէների վանքերի հիմնադիրը Աղեր-
 սանգրը, այդպիսի մի վանք հիմնեց և Կ. Պոլ-
 սում, այն է կայսերութեան ճայրքաղաքում,
 ըստ խորհնային չէ ասում «ըստ նմանու-
 թեան Սպուզէիցն մայրաքաղաքին»:



Խորհնայու մէջ շատ սրտէն «Արարաք»
 և «Արարաք»: («Գայ հասանէ ի հիւսիսի
 յերկիրն Արարաքայ Քէ Քէ Կառնայ»
 Ա. Ժա): Արարաքը կամ Սարարաքը (ըստ
 փառաստի) վանից հարաւ է մինչդեռ Ար-
 արաքը, յայտնի այրարաքեան՝ կամ ինչպէս
 այժմ սփար ենք ասել՝ արարաքեան նահան-
 գըն է, վանից հեռու: Արարաքի մասին տես
 և Խորհնայու «Գէլ»-ը՝ Մծուրնացու մօտ (Սե-
 րէսի սկզբում): Բոլոր թարգմանիչները,
 նաև Էմինը իւր նոր թարգմանութեան մէջ,
 բոլորովին նայնացնում են այդ երկու տար-
 րեր անունները, առանց որ և է պատճա-
 րաբանութեան: Այս աններելի է մանա-


ւանդ՝ Ք. Պատկանեանի այդ հարցի ման-
 րամասն ուսումնասիրութիւնից յետոյ: Եթէ
 համաձայն չեն Պատկանեանի առաջ բերած
 ծանրակշիռ և լուրջ սպացուցութեանը,
 պարտական էին գտնէ այդ լիշել և իրենց
 պատճառարանութիւնը գնել: Այսպէս է
 վարուած նաև Հ. Ալիշան իւր «Այրարատում»,
 երևի անտեղեկ լինելով ուսերէնի: (Տես
 այս մասին Պատկանեանի՝ արդէն մեծ մա-
 սամը հնացած՝ աշխատութիւնը. Банскія
 Надписи, 1881. եր. 92—104): Ք. Պատ-
 կանեանի առաջ բերած բազմաթիւ վկայու-
 թիւներին մենք կաւելացնենք մի նորը՝
 Տիրանուն վարդապետի գրուածքից, «Լ. Գ.
 Տոպանն Նոյի ի կորդուս ի Սարարաք 4) լե-
 «րին է, և ոչ ի Մասիս, ի Մասեայ գնացք
 «աւուրց քսանից, աւելի կամ սակաս սր-
 «պէս կայ այդ ոչ 5) ի գրի վասն թմանուն
 «լերինն, որ թարգմանի ութ, որ էին ի տա-
 «պանին ի ձեռակերտին Նոյի, սրում 6) Հան-
 «գերձեցաւ Յակոբ Աստորոց գալ տեսանել:
 «Ծանօթ. 1. Ձեռագրում՝ «ի Կորդուսիս Արա-
 «րաք լերինն»:

2. «Որ պէս կայ տ ոչ», Ձեռ-ը գ դիմորոշը գը-
 բումէ յաճախ ու սոյն իսկ պատճառով թերևս
 ընթեռնելի՝ որ պէս կայ այդ ոչ (?):

Համար Բուզանդ. Գա. Գ. գլ. Ժ. Տես նաև
 Նորայր Բիւզանդ. Քեննասէր, Պրակ Ա, եր. 43—
 46, 61—64 և պրակ Բ. եր. 64. (Վկայութիւն-
 ներ են առաջ բերուած Եփրեմի Համարաբանից,
 Խորեն. Հափսիսեանց Պատմութիւնից, և այլն.)
 Օտար աղբիւրներ տես Պատկանեանի վերոյիշեալ
 աշխատութեան մէջ). Տես և «Այրար. «Այ-
 րարատ» Սարարատ» բառերը:

ՄԻԱԲԱՆ.

(Հարունակելի).



ՓԻՐՄԻԼԻԱՆՈՍԸ

I

ՄՈՒՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՏ.

Փիրմիլանոս Որիգինէսի աշակերտներից մէկն
 էր: Գ. դարու երկրորդ կիսում կապադովկա-
 յի կեսարիա քաղաքի եպիսկոպոս լինելով: